

## ԱՇՈՒՂ ԳՐԻԳՈՐ ՏԱԼԵԱՆ (ՇԵՐԱՄ)

(ՆՐԱ ԱՇՈՒՂԱԿԱԾՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻ ԱՌԴԹՈՎ.)

(Շար. տես Բազմ. 1980 էջ 881)

Այսպիսի անկեղծ զգացումներով հաս  
մակած սիրեցներ դեռ շատ ունի Շեր  
բամբ և լակայն առանձնապէս արժանի են  
ուշացրութեան և զեղարեսատական արժէք  
են ներկայացնում նրան այն երգերը, որոնց  
հիւսւած են ժողովրդական մօտիւով։ Այդ  
երգերն աչքի են ընկնում ոչ միայն իրենց  
պարզութեամբ և անկեղծութեամբ, այլ  
և տեղ տեղ զգացումների խորութեամբ և  
երածտութեամբ։ Այդ հանգամանը ցոյց  
է տալիս, որ աշուղը ոչ միայն օժտւած  
է բանասեղծական ձերբով, այլ և ծառ  
նօթ է ժողովրդական ոճին և լեզվին։

Այդ երգերից շատերն ունին եղանակ։  
Ներ և մինչեւ օրս էլ երգւում են ժողովրդից ընդարձակ խաւերում։ Դրանց երգովներն ու տարածողները խաղ ասող և  
նւազող աշողներն են, որոնց անձամբ  
հանդիպեցնեց թէ իրեւանում և թէ թիֆ-  
լիսում և նրանց բերանից էլ լսեցնեց Շեր-  
բամի երգերը, որոնց ունին աշուղական  
նոր, կենանի և հմայիչ եղանակներ։ Միզ  
չի լսել նրա, օրինակ, այնքան ժողովրդա-  
կանացած «Աչքդ խումար»ը որ ձայ-  
նագրել է երիտասարդ երաժիշտ Վարդգէս  
Ֆալեանը։ Ահա այդ երգի ամրողական  
պատկերը։

«Գարուն սիրուն անուշ եար,  
Արի, գարուխ արա ճար.  
Ես քեզ համար մնոնում եմ,  
Դու նստել ես բէխաբար։  
  
Աչքդ խումար, ունքդ կամար,  
Ոխուշիկ եար արի տար։  
Ի զուր սիրու քեզ տիի,  
Ալ օրս փոխւց սիւի,  
Դարդէս հէչ խաբար չունիս,  
Թողիր կարօտ արեւի։

Նուր կու տամ ինչ կուզես,  
Խնձ մի թողիի սեւերնս.  
Գուն չունիմ, գաղար չունիմ,  
Գոնէ մէկ օր արի տես։  
  
Վարդս թողի հեռացայ,  
Բահս, զործս մոռացայ.  
Մալ ու մուլքս վասենցի,  
Վառ էշնէր աշուղ զարձայ։»

(անտիպ)

Եւ այսպէս Շերամը մէկը միւսից զրա-  
ւիչ և գունեղ սիրեցներով պատկերա-  
ցնում է իր հոգեկան զրութիւնն ու ապ-  
րումները։ Ահա ձեզ մի այլ նկար.

Բաղէն թոած բլբուլ եմ,  
Պարտէշն պոկած սնպուլ եմ.  
Ով որ սիրու հասկանայ,  
Ես նորան զուրպան ու զուլ եմ.

Ազբիւր եմ սարի սրուին,  
Զարա չկայ սրախ զարդին...  
Զնիփիւր եմ չօլէն կու զամ,  
Հիւած սրտիրին հով կու տամ։  
Ա վարդին - ալվան վարդին  
իմ շղիրս սիրով կու տամ։»

Ահա այսպիսի ժողովրդական վրձինով  
նկարւած զեղարեսատական սիրերգ է։

«Ալմպեր ելան բլուր-բլուր,  
Մասիս սարի կատարէն.  
Ա՛ն, իմ սիրու կարօտ մնաց,  
Իմ թառլանէն, իմ եարէն։

Ա՛ն, թողից հեռացաւ,  
Խնձ եարաց մոռացան...  
Լուսին չիայ, որ մէկ տեսնեմ -  
Ասեմ, եարիս խապար տար։»

(«Ուր և կոի» էջ 95)

Եւ այսպէս անցնում են երկար գառաններ, բայց աշուղը դարձեալ չի մոռանում իր սիրածին: Այրոյ կը ակը միշտ անմար է մոռւմ նրա սրտում:

«Ձմեռն էկաւ ձուն չի զայ,  
Ճաղէի կաշեմ տուն չի զայ.  
Մարդու դարտաժար կանէ,  
Միհակ ացք քուն չի զայ:

Անջիկեար—անջիկեար—անջիկեար,  
Արի միհակ եմ, եար քեզ կը սպասեմ,  
Զէդին քու դարտով մեռնիմ:

Մշուշն իջաւ սարերուն,  
Նւափն ընկաւ ձորերուն.  
Էրնէկ կու ասմ ամէն օր  
Խցած անզին օրերուն»:

Անցնում են մշուշոտ օրերը և ահա աշուղի կեանըի համար բացւում է մի նոր լոջան: 1927 թիւն մեռնում է աշուղի կինը: Նոյն թիւն, Թիֆլիսում, նա պատահամիր հանդիպում իր սիրած եարին և 70 տարեկան հասակում կապում է նրա հետ: Այդպէս էլ վերջանում է աշուղի կեանըի սիրոյ դրաման:

Ահա սրանց են աշուղի անձնական սիրոյ, վշտի և հոգեկան ապրումների յատուկ լարերը, որոնց իրենց ոնով ու շընչով, իրենց յանգով ու երանցով և մանաւանդ իրենց անկեղծութեամբ և գունագեղութեամբ, անկասկած, առանձին տեղ են զրաւելու աշուղական նորազոյն զրաւկանութեան մէջ:

Առհասարակ աշուղի կեանըի բնորոշ մօմէնների հետ ծանթանալու համար այդ երգերն արժէցաւոր ատազ են:

Ինչ է բարոզում սակայն աշուղը, ինչ է զրած նրա զրոշի վրայ:

Այդ երգերի մէջ նա լաւատես է: Կեանըի բարձմաթիւ դժւարութիւնները, խոչընդոտները, յորմանքերը կոնկաւ, կոփել են աշուղին: Նա զիտէ, թէ ինչպէս պիտի պայքարել կեանըի ալիքներին, դժւարութիւնների դէմ: զիտէ և «նամարդ» թշշամինից պաշտամանել, որովհետեւ ունի խորը փորձառութիւն: Եւ նա իր «ոսկի խրատները» երգում է երիտասարդներին, որպէս զի նրանց ձախորդութեան, զըժքահատւեն և զնի չզնան կեանըի անողոք, զաժան հարածներին:

Մի երգով նա խորհուրդ է տալիս նախ բան գործել՝ լորջ մտածել, «անհլիք» գործը թերի չլողնել, ընկերոջ փառքին չնախանձել և միշտ փորձած ու տոկուն մարդկանց խորհուրդին հետեւել: Ռեզում ես կեանըում յաջողել—մի՛ շուպիր, մի՛ լինիր «զոռոզ», «անզութ», այլ եղի՛ք բարի, ջանասէր և միշտ ներիր թշնամիներիդ:

«Բանիր որ շատ շտապնա—  
Անդան պիտի ուշ հասնես,  
Պէտք է հանգիստ համբերես,  
Մինչև որ զայ հերթը քեզ:

Թշնամոցդ միշտ ներէ,  
Դա քեզ բարիք կ'ընի,  
Գոռող, անգութ կ'լինիս,  
Որ վաղաժամ թառամիս,  
Եղի՛ք բարի, ջանասէր,  
Թշւառներին սէր և տէր»:

(«Անջուր Պարտէզ» էջ 89)

Այնուհետեւ աշուղը յորդրում է չվարենալ, երբ մոայլ ամպերն են կուտակւում, ցըւսահատւել, երբ ծանր, սկ, դժւարիստ օրեր են զալիս: Այդպիսի հանգամանցներում պէտք է բաջ, տոկուն լինել, որովհետեւ խաւարին միշտ լոյսն է յաջորդում, կրկին «նոր լոյս» է բացւում և կարմիր արև է ծագում:

## 5. ԽՐԱՏԱԿԱՆ-ԲԱՐՈԶԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Երամն իր աշուղական գործունէութեան ընթացքում զրել է նաեւ խրատական-բարոյական երգեր, որոնցով նա հանդէս է գալիս իրիւն բարոյախօս-հրապարակական աշխարհայեցքի զլիաւոր գծերը:

«թէ որ անցին պայծառ օքեր,  
Մինչ ու զիշեր զանայ,  
Մի վախենար անզին ընկեր՝  
Լոյսը մեզ ի մոռանար:  
Կրին մեզ նոր լոյս կը բացի,  
Կարմիր արև կը ծագէ»

(«Անջուր Գարտէկ» էլ 9)

Աշուղը զիտէ որ մեր ազիզ կեանցն  
Էս աշխարհում առանց այն էլ շատ կարձ  
է, որ մենց բոլորս երազի պէս եկել - կ'եր-  
թանց. ուստի յորդում է ի զուր տեղը  
կեանքը չշառնացնել, ախ չքաշել, չը-  
տիրել, այլ ընդհակառակը միշտ վիճակից  
զո՞ւ լինել. զա է երջանկութեան ուղին:  
Եւ այդ վիճիսոփայութեամբ էլ աշուղն  
երգում է.

«Բայց վիճակէտ միշտ գոհ եղիր,  
Կ'ուզէն լինել երջանիկ...  
իսկ երբ ընկիս մաքի ծովում,  
ինչպէս վախուս նաւազար,  
Գիտցիր, անչուշ, ծովի ծոցում  
Կորչլու ես զու ի սպառ»

Աշուղը չի սիրում և ծոյլերին, թոյլե-  
րին, վախուսներին, այլ համակրում է  
նրանց, ովքեր «տոկուն» են, «աշխատա-  
սէր», «ջանասէր», բաշ և եռանդուն:  
Այդպիսի յատկութիւններով ու բարեմաս-  
նութիւններով օժտածները միշտ կեանցի  
պայքարում տանում են յաղթանակը Այդ-  
պէս է կեանցի երկաթէ որչնըց: Ապրել  
ես ուզում, պէտք է աշխատես, պէտք է  
ջանասէր լինես, կեանցի մեծ հոսանքի հետ  
առաջ զնաս, իսկ եթէ ծոյլ մնաս, բաղցից  
կմեռնես.

«Թէ ապրել կ'ուզե՞ն, պէտք է աշխատես,  
Ջանասէր մարդկանց շարքերը մտնես.  
Առանց աշխատել չեն տալիս քեզ հաց,  
Եթէ ծոյլ մնաս, կմեռնես քաղցած:  
ինչ որ վիճակած է այս է սիրելի,  
Ի զոր քեզ մի տանչիր, ոչինչ չես տանի.  
Կեանքը միշտ կոր է, չանքը զովելի;  
Ով տոկուն է, զործը դիրին կը տանի»

Բայց աշուղը մարդկային կեանցի ե-  
րեւոյթներն ուսումնասիրելուց յիտոյ զըս-  
նում է, որ կեանցում ամենամեծ զժրախ-

որ նա է, ով անուս է, անգրագէտ: Վայ  
անուսում, տգէտ մարդկանց. նրանց օքը  
միշտ սկ է, տիուր, որովհետեւ մերկու-  
թիւնն ու բացցածութիւնը նրանց անրա-  
ժան ընկերներն են: Ռւզում ես երջանիկ  
լինել, ապա լսի՞ր աշուղի յորդորը և կեան-  
ցում տգէտ մի մնար, որովհետեւ կըր-  
թւած մարդը միշտ բարձր պատիւ ունի  
և նա միշտ էլ բախտաւոր է.

«Կեանիք թոյս կը զառնայ տգէտի համար,  
Կրթւած մարդը կ'ապրի իր սրտին յարմար.  
Տցէտի օրն է սկ, մերկ ու քացած,  
Դոնէ գուռ ման կուզայ հոգին մնուցած,  
Կրթւածի բախտը միշտ կըլինի արթուն,  
Երբէք չի հնանայ սիրով ու ժպատին»

Աշուղը զիտէ և այս, որ էս աշխարհն  
ու կեանցն ունայն է, զիտէ, որ բոլորս  
էլ էս աշխարհի վրայ հիւրեր ենք, էսօր  
կանց, վաղը չկանց, և ամէն ինչ անցո-  
ւական է, ապա ուրեմն խորհուրդ է տա-  
լիս հարստութիւն չզիգել և փառը չձգո-  
տել, որովհետեւ.

«Որքան վագնս, որքան ջանաս,  
Ամբողջ երկին էլ աէր զանանս,  
Թէկուզ ոսկէ ծովում լողաս,  
Մերկ եկել ես, մերկ պիտի զնաս»

Այդ փիլիսոփայութեամբ և հոգերանու-  
թեամբ էլ աշուղը իրատում է միշտ ու-  
րախ, միշտ զարթ լինել հոգեկան բարձր  
արամազդութեամբ ապրել, միշտ ցէֆ  
անել, աշխարհցի ցաւը, վիշտը զինու,  
երածշառութեան մէջ ընկդմել: Ահա այս-  
պիսի բարոյականի վրայ է հիմում աշու-  
ղը կեանցը և յորդորում է.

«Ով որ ինելք ունի թող միշտ քէփ անի,  
Ոչինչ չի տանի էս աշխարհէն»

Սիրում է աշուղն ուրախանալ երա-  
ժըշտութեամբ, զինովլ.

«Ածեցէք թասը, խորւցեք զառը,  
Գիսու տակառը անզին քան է:  
Ինչ էք մտածում, ոսկիներ զիզում,  
Դաստակ աշխարհց լին էք երազում.  
Մեռնիլը որ կայ ամնացիս համար,  
Կեցցէ լաւ մարդը, բլբուն ու վարդը»

Յիշում էր արևելքի տաղանդաւոր բանաստեղծի՝ Օմար-Շայամի տողերը, որ նա աշխարհի ունայնութիւնը պատկերացնելով այսպէս է փիլիսոփայել.

«Այսպահ զուր վիշտ մի կրեր, ուրախ ապրէ, եւ անարդարութեան ճամբուն մէջ զուն արդարութեամբ ապրէ».

Բայց աշուղին խոր վիշտ և ցաւ է պատճառում կեանցում տիրող սոցիալական անհաւասարութիւնը. Նա գիտել է կեանըը, խորը քննել և տեսել է աններդաշնակութիւն, անարդարութիւն, անհաւասարութիւն, որոնց պատճառով էլ առաջ են եկել տկարենք ու հզօներ.

«Որոնք տանիւում են բնութեան ծոցում, Որոնք էլ հրաւում վեհ փառաց զրկում».

Սոցիալական անհաւասարութիւններն աւելի բնորոշ է զծել իր մի այլ բանաստեղծութեան մէջ.

«Մէկը կուշտ է ման զալիս,  
Մէկը քաղցած է լալիս.  
Մէկը հրանգ կը սփայ,  
Մէկը ուրախ պար կը գայ»:

(«Անգուսպ Ալշաւ» էջ 6)

Այստեղ նշենք մի մոմէնտ ես. Շերամի իրատական երգերն այնքան պարզ են և անպանոյն, որ թւում է, թէ զրանցից շատերը հիւաւած են ժողովրդական ասացւածքներից. շատ առողեր յիշեցնում են ժողովրդի բերնում շրջող ասացւածքները.

«Այսին սիրառակ շասն բնաւ,  
Մնաւաքը չի գանձայ կոտաւ»

Այսքանն էլ բաւական է աշուղի բարյատկան աշխարհայեացը մասին որոշ գաղափար կազմելու համար:

Յ. Երգիծական Երգեր Աշուղ Շերամի երգել է և համարակական կեանըը, արձանագրել է իր ապրած միշավայրի, շըշանի, բացասական, հիւանդագինի երոյթները, զծել է կենցաղային, սոցիալական այն այլանդակութիւնները, որոնց վճառ-

կան գեր են կատարել ժողովրդի կեանցում և որոնց հետևանցով առաջացել են մի շարք դրամաներ:

Պէտք է խարել, ստել, կեղծել, որովհեաւ դա է աշխարհի կարգը, աջորդութեան միակ միջոցը: Ահա այս է ժամանակաշրջանի ակրոջ հոգերանութիւնը, բարյականը, իւ կենցաղային խորքի վրայ ինչպիսի այլանդակութիւններ ու խարերայութիւններ ասես չեն կատարում, Յոյց են տալիս ընտանիքի զեղեցիկ աղջկան, սակայն հարասանիքի օրը հարս են դարձնում նրա տղեղ, պառաւ ցրոջը: Հետեաննը: Զարհուրելի դրամա: Ահա այսպիսի մօմչնութ է ապրել և աշուղը: Նա քաղացում տեսնում է մի զեղեցիկ աղջիկ, հաւանում և նշան զնում: Հարսանիքի գիշերն աշուղը բանում է իր նաշխունի երեսի ցողը և ահա սարսափով տեսնում է իր մօմ կանգնած նրա տղեղ, պառաւ ցրոջը: Սա չի յիշեցնում ձեզ զրամատուրզ Քարրել Շունդուկինի «Խանգարայան», զա մի ամրոջ դրամա է, գծած մնծ պաստափ վրայ: Աշուղն այդ յուղիչ պատմութիւնը նկարել է սեղմ, պարզ և անպանց մի ոտանաւորով.

«Զահէլ, անփորձ տղայ էի, կնիկ առնել կամեցայ, Արան, նրան հարց-փորձ էրի, աղջկայ տեղ իմաւ ցայ, Ասի մօրս. Էրթանք մայրիկ, սիրուն աղջիկ եմ նարել, Էրթանք տեսնենք, նշան դնենք, զեղից քաղաք են տարել:

Մնկ գնացինք մուանք քաղաք, նորանց տունը հարցընկը, Մնկ ցոյց տիին ուր որ էին, համարը, հասցէն վերցինք. Վերջ ի վերջոյ մտանք այնանկ, ուրտեղ աղջիկն էր ապրում, Սիրուն աղջիկ նստած մննակ ինչ որ մի բան էր կարում: Մոփիս ասի. Ինչ սիրուն է, անապ որան ինձ կուտան, Աքով, ունփով շատ զեղեցիկ, բօյով, բոսով աննման:

Մէրը էկաւ բարեց, մնզ տարաւ յողէն նստես ցիկ, ինչ որ խօսեց, մէր ու տղա նորա խօսը լսես ցիկ:

Բնրին առաջ էն աղջկը, տեսայ ու շատ հաւանիցի, Առանց մի խօսի իմ մատնիքս նորան նշան տեսեցի. Ռւդիդ երեք ամիս անցաւ, գտուլ-գուռնա չաւ լելով՝ Էկանք սիրուն հարսին աարանք երգելով ու պարելով:

Հարսնիք էրինք, լաւ գուըթի պրծանք, մարդիկ գնացին, Ամէնիքն իրանց տունը մտան, հանգիստ սրոտվ թնեցին. Եւ ես հարսին ձեռքը բռնած մտանք սննեակ թիւ, լու, Նա չէր թողնում ճրագի տակ լոյս երևը բաւալու:

Իսկ ես զօռով հաստ քողը երեսից ես քաշեցի, Կարձես աշխա արուն լցւեց երբոր գէմքին աշեցի. Սիրուն քոյրը տունը մտաց, տղեն ինձ կին իրաւ ձաւ, Հասկացայ, որ ես խարւած եմ, ջահէլ սիրուն երացաւ.

Մինչև էսօր էն կնոջ հետ գեռ ապրում եմ ակամայ. Ամէն ջահէլ թող ինձ աեսնի իր հաշին իմանայ» (անտիյ)

Ընտանեկան կեանըը թունաւորող, քայլայող կենցաղային բարեկը, չարիքները, այլանդակութիւնները սակայն բազմերանգ են, սրոնց արձանազրում է աշուղը մի այլ երգով: Այնաեղ նա բողոքում է ընտանիքի դրամատիրական, շահասիրական ձգտութերի և հոգերանորթեան զէմ:

Երիտասարդին պսակում են պառաւ, տգեղ օրիորդի զետ, որովհետեւ նա փող ունի, ինչ է լինում սակայն այդ ամուսնութեան հետևանըը: Ակսում է ընտանեկան դժրախտութեան դրաման, որով-

հետև ամուսնացածների մէջ չկայ փոխադարձ սէր, զոյութիւն չունի համակրանք, անկեղծութիւն: Ահա այլպիսի խորքի վրայ է կառուցւած աշուղի «Ես ջահէլ մեյ ստանաւորը»:

«Ես ջահէլ եմ, եարս պառաւ, Ո՞րտից էկաւ ինձի առաւ, Գլխիս խաթարալա զառաւ: Էս ինչ օրէնք էր որ դրին, Որ չի զտնում եարը եարին:

Ես սիրուն եմ, եարս չիրքին, Վարք էլ չունի գոնէ կարգին, Կարծես քարէս սիրուն ու հոգին:

Մէրս խորթ էր, հէրս տկար, Սէկը սրոտվ ցաւող չկար, Ընկել եմ էլ չկա հնար:

Ռսկու զօռով ինձ խարեցին, Իրենց շափով էլ չափեցին, Ալոլուս հնտ պինդ կապեցին:

Մօցիթուլ մտա մեր տոնն, Համոզեց խորթ մօրս թագուն, Տարան տին պառաւ մարդուն:

Չուրկ թողեցին ջահէլ եարէս, Մէջ է դարտոս, խորն է եարէս. Պապակ թողին խաս զոհարէս: Էս ինչ օրէնք էր, որ դրին, Որ չի զտնում եարը եարին»

(անտիյ)

Նոյնըան հետաքրքիր է «Մեծ այզեպան» խորազրով ստանաւորը, ուր հակադիր պատկերացութեով և համեմատութիւններով մտրակում է և ծաղրում ժամանակարչանի մարդկանց գոռողութիւնը, եսասիրութիւնը, մեծամտութիւնը, անազնըութիւնը.

«Մեծ այզեպան փոքրիկ պարտէզ. Ազատ արծին նեղ ասպարէզ. Գոհար ակին ժանգու երկաթ, Խոզն է հազել ատլաս խալաթ: Կատուն կ'յաղթէ մեծ առիւծին, Փիզը վեր է առել վրձին. Սարդն էլ մետաքս զորք է շինում, Եերամ դուն էլ ինչ ես մտում»

(անտիյ)

Ազուղի ծաղրից չեն վրիպել նաև ժամանակաշրջանի թիֆլուսիցի ընտանիքը. մերկացնելով հին կեանցի մութ կողմերը, այլանդակութիւնները, բիլու կոպիտ բարերը, մորակում է նաև տիպերին.

«Տէրս կամերասնդին,  
Աղջկո զիմազիստկա.  
Կնիկս էլ խօս ամէն զիշեր  
Ցիրկ ու թատրոն ման կու գայ:

Թէ վուր տունս զօնադ զայ,  
Մի թիքա հաց չի ճարզի.  
Ընկիրս էլ ձեռփոն ընկայ փուզը,  
Խումարի մէջ կուտարվի:

Եորիս զիփ կեղուտ, հին,  
Հարուր տեղից կարկատան.  
Ալա ես ոնց զարս ցաշեմ,  
Մի տեղից շունիմ գուման:

Առ ու տուրից չիմ խաբար,  
Հնոց վասով կուծախիմ.  
Էլ ոնց անիմ, ճարս կորած  
Մրան, նրան կուխարիմ:

Մուլապ ձիք բան հարցանիմ,  
Օտով բեղամազ չի.  
Թէ ուր էսպէս զնա բանս,  
Ես իմ վերջը ոնց կուլի:

(Անտիպ)

4. Ալգային-յիդափիյահն մօտիներ: Աշուուց Շերամն իր բաղացական աշխարհայեցը արտայայտել է ազգային-յիդափիական երգերով, որոնց ընդդրկում են երկու տարրեր շրջան: Ալաջինն սկսում է 1900 թից և տեսում է մինչև 1920 թիւը, իսկ երկրորդը՝ 1920 թից և շարունակում է մինչև օրս:

Ալաջին շրջանի երգերով աշուուց արտայայտիչ է հանդիսացել իր ժամանակի ազգային տրամադրութիւններին, հայրենասիրական ոգուն:

Դասուլթան Համիդի հակազդեցութեան զարհութելի շրջանն էր, Դա այն ժամանակաշրջանն էր, երբ հրապարակի վրայ դրած էր «ազգային հարցը», նա մանաւանդ թուրքակայերի ազատազրութեան

ինդիրը, որ տուն էր տալիս զրականութեան և ինտելիգենցիային:

Ահա ուազմական այդ շըշանում աշուուլը ևս տարւում է շովինիզմի ալիքներով: Նա էլ հայ ժողովրդի բախտը շղթայում է Եւրոպական բոլոժուազիայի «մեծ պետութիւնների» հետ: Եւ, որ զիսաւորն է, շկարողանուով ըմբնել դասակարգային շահերի ներհակութիւնը, հիւսում է մարտական այսպիսի երգեր.

«Ալ ու ալւան ես հագել,  
Կարմիր լուլա ես գառե.  
Սիւրէի կրոր մէջթու—  
Փամփուշտներով ես ծածկել...  
Աղբէր չան, քեզ զուրքան,  
Մեր զիւմանը դու ես, զոււ»

(«Աէր և կոխ» էջ 81)

Սակայն հոկտեմբերեան յեղափոխութիւնը հիմովին յեղաշրջում է նրա աշխարհայեցը և նա խորապէս գիտակցում է, որ հայ ժողովրդի բախտը պիտի կապել համաշխարհային աշխատաւոր ժողովուրդների հետ, որ միմիայն այդ եղայրական սերտ կապը կարող է հայ ժողովրդին իսկական երջանկութիւն բերել: Եւ անան երգում է ազգերի եղայրութիւնը, նոր շինարարութիւնը և ամրող հոգով ու սրտով կապւոմ նոր կեանքի, նոր կուլտուրայի ու պատմութեան հետ:

Մի տեղ նա ոգեսրւած Անդրկովկասի հանրապետութիւնների և ժողովուրդների մութեամբ, բացականչում է:

«Ռուսներ, հայեր, վրացիք, յոյներ,  
Աշխարհի ըլլոր ազգեր զանազան.  
Եւ զուք հարեւան պարսիկ եղայրներ,  
Լիննիք գիտակից, վշտնիք կոյր շլթան:  
Բոլորս ծնւած միակերպ մարդիկ,  
Ուլոտենք մէկմէկու սիրել հաստատուն»

(անտիպ)

Ազուղին ունի զետ ուրիշ մօտիւներ, բայց այսքանն էլ բաւական է զաղագիւր կազմելու համար նրա կեանքի, աշխարհայեցի շրջացի, մտորութերի և այն ժամանակա-

շրջանի ու միջավայրի հետ, որի մէջ առ պրել է նա և ստեղծագործել:

Առհասարակ Շերամի երգերն ունեն թէ զբական-պատմական և թէ հասարակական արժէք և հետաքրքրական են ժամանակաշրջանի հիմնական այս կամ այն երեսոյթների և դէպքերի հետ ծանօթանալու տեսակէտից:

զրոշմը զնել նրա երկաթի պէս առողջ ֆիզիքականի վրայ: Երիտասարդական կորովով, վառվոուն, տաք բնաւորութեամբ ոգնորում է ձեզ:

Ամրողնովին եռանդ է և ոգնորութիւն: Խօսում է կը ակի պէս: Եւ չնայած տարիքին, ձայնը հնչում է զօրեղ և առողջ, որն աւելի դիւրեկան է զառնում, երբ նա



ԱՇՈՒՐԻ ԳՐՈՒԹՈՐ ՏԱԼԵԱՆ (ՇՆՐԱՄ)

(Աշուրի 50 տարի առաջ իր ծեռքով շիմած թառը, որի վրայ մւագում է միթյեւ օրս).

### Յ. Ա. ՇՈՒՐԻ ԴԻՄԱՀԱՄԱՐԸ,

ՆԻԱԳԲ ԵՒ ԶԱՅՆԸ

Առաջին հանգիպումից իսկ նա զրաւում է ձեզ իր պարզ, անուշ խօսակցութեամբ և ընկերական ջերմ վերաբերունքով:

Բարձրահասակ, նիհար, սպիտակա-խառն մազերով, փորքիկ աչքերով մի ծերունի է Շերամը, բայց ովկ կարող է ասել, թէ նա արդէն 73 տարեկան է: Ասես տարիները չեն կարողացել իրենց

ձուլում է իր թառի, իր երգի հետ:

— Կարո՞ղ եմ լսել ձեր նւազը, զիմեցի:

— Ուրախութեամբ՝ կարճ պատախանեց նա և աշուղական անպարոյր թառը զնելով կը ծրին, զարկեց լարերին:

Նւագելին նա ամրոցնովին ձուլում էր իր երգի և երաժշտութեան հետ և չնորհել իր վարպետ և նուըր նւազածութեան առանձնայատուկ ոիթմ, տեմպ ու թարմութիւն էր մացնում և ազդում:

Հնչում էր աշուղական թառն արևելիան երանքներով և գունազեղութեամբ; Թառի լարիքի հետ հնչեց և աշուղական սիրեղը.

«Հազար էրնէկ էն զիշերին,  
Ո ինձ բութա տւեցիր...»

Իրիկական պօէզիան և երաժշտութիւնը զեղեցիկ կերպով ներդաշնակում էին միմանց և երգն այնքան պարզ և հասկանալի հնչում էր աշուղի շրթների վրայի.

— Սիրում եմ երգել չափից գորս. — Ժպտագէմ զիմեց աշուղը, երբ լսեց թառը: Եւ երիտասարդական աւիճով սկսեց պատմել իր սիրոյ ապրութերը, որնց յասուկ են միայն հին ասպետներին:

— Դարձայ սիրոյ ասպետ, բայց մեծ մարդ չդարձայ. — Ժպտագէմ զիմեց և սկսեց արտասանել.

«Ենորհք շատ, խեցք քիչ,  
Միափր որպէս մաքուր լճ.՝  
Ափսոս գարել զգիսս,  
Ոսկիդ շինել ես արճին.»

(անտիպ)

Ապա առանց սպասել տալու գրկեց թառը և սկսեց նազել մէկը միւսից հմայիչ աշուղական երգերու:

## 7. ՄԱՄՈՒԿԻ ԿԱՐՄԻՔԸ

Ինչ է ասել ոռոսական մամուլը, ինչպէս է բնորոշել աշուղի զերը, ինչպէս է արձանագրել և նրա նշանակութիւնը հայ մամուլը—տանը այստեղ ընդհանուր պատկերը:

1. «Դարձա վոստի», 1927 N. 1626, թիվին:

Սոյն ամի 15-20 Բագվում կայանալու է աշուղական համագումար (ժողովը դական պօէտ-երգիչների): Այդ համագումարին Հայաստանի Լուսոդղումատը գործուղեց Գրիգոր Տալեանին, որը յայտնի է «աշուղ Շերամ» անունով: Շերամը 70 տարեկան է, ապրում է Թիֆլիսում. Նա սկսել է երգել և եղանակներ յօրինել

երգելով նրանց թառի նւազածութեամբ 17 տարեկան հասակից: Նրա հարիւրաւոր երգերից շատերը մտել են Հայաստանի ժողովրդական եպօսի (գրականութեան) մէջ:

Շերամի երգերի զիմաւոր մասիներն են լիրիգական և հերոսական: Լիրիգական երգերում Շերամը երգում է սէր, բայց այն ծանր պայմանները, որի մէջ երկար ժամանակ գտնում էր Հայաստանը, տալիս է այդ երգերին ախտը բնոյթ: Ինչպէս, օրինակ, մի երգով նա զիմում է սարերին և խնդրում է ճանապարհ տալ նրան:

Սաբճ, կ'աղաւեմ իշեք, ցարդացէք,  
Գնում եմ եարիս, մէկ ճամբար բացէք.

Եւ սարերը լսում են երգչի խնդրանըը, բայց՝

«Երամ, սէզ եարիդ սիրու է սառել,  
Էլ ինչ ես իզուր փարւանա դատել.  
Չպել կ'աղաւես սարին ու փարին,  
Ուրիշն է սիրել քո սիրած եարին»:

Վերջերս Շերամի երգերի մէջ հանդէս են զայիս ուղիղ մատիներ: Լենինականի երկրաշրժից յիսոյ նա յօրինում է մի երգ նիրած նրա վերակառուցմանը: Այդ մտիները հիմա Շերամի երգերի մէջ զրաւում են զիմաւոր տեղ: Լենինականի երգն այժմ մասսաների սեփականութիւն է դարձել:

Ա. Պ-ին

2. «Պրոլետարի մովկիան», 1929, Մոսկվա, N 3.

Հայ աշուղներից աչքի ընկաւ աշուղ Շերամը: Նա (Գր. Տալեանը) յայտնի և վաստակաւոր հայ աշուղներից մէկն է, որի աշուղական գործունէութեան 50-ամայ յորելիանը այս տարի տօնելու է թիֆլիսի Հայարտան կողմից: Նա պատկանում է այն քչերի: Բւին, որը մինչույն ժամանակ իր երգերի համար յօրինում է սեփական եղանակներ: Նրա հարիւրաւոր երգերից շատերը արդէն մտել են հայ ժողովրդական բանաստեղծական գրականութեան մէջ:

Նրա երգերի զլիաւոր մօտիւներն են լիրիկական, հերսոնական, խակ վերջին ժամանակներս յեղափոխականն ի միջի այլոց նա յօրինել է մի երգ նւիրած լինինականի վերակառուցմանը, խոր իշխանութեան օրով: Բնորոշ են հետեւալ խօսքերը.

Այժմ ունենալիք մնաք ընկերներ,  
Սովետական կանգուն կարգեր.  
Նույն կընին նոր ճաշակով,  
Են հնաշէն խալիուկ տներ»:

Նա կատարեց մի շարք երգեր, որոնց ից պէտք է շեշտել «Հաղար էրնէկ» և «Թառը դոշիս»:

Ա. Դ.

3. «Կրամնանայ Նիւա», 1930 թ. N. 3, Մոսկավ:

Հայաստան. — Հայաստանում, երբեմն քարի և արեան երկրում, կատարում են մեծ զործեր, և Շերամը, լինինականի հին աշուղը, այն քաղաքի, որը կրում է լինինի անոնը, երգում է առհասարակ սօվհտական շինարարութեան մասին: Ըստ այսպիս ամէն մի աշուղ, ինչպէս և ծերուկ Շերամը, անցնելով քաղաքից քաղաք, երգեր է հիմում մեծ լինինի յիշատակին:

Լ. Մայրանովսկի

4. «Կարմիր Աստղ», 1922 թ. N. 73, Թիֆլիս:

Ժողովրդական բանաստեղծերիցի Գրիգոր Տաղեան. — Թիֆլիսում երգ ու նուազ սիրողների մի խումբ՝ գեղեցիկ միտք է յոցել կիրակի օրը, ապրիլի Զ-ին, մի տօնական երեկոյթ կազմակերպել ի պատի: Ժողովրդական երգահան և երաժիշտ երգիչ Գրիգոր Տաղեանի 40-ամեայ գործունէութեան առթիւ:

Տաղեանի յօրինած երգ ու եղանակներն աւելի են տարածւած ու սիրած, բան ինըը հեղինակը, որ համեստ է մասցել, և աւելի լայն ժողովրդականութիւն չի ստացել զիս եւս:

... Ի՞նչ է երգում Տաղեանը. «Աէր և կորիւ» շատ յաջող կերպով էլ նա 1907 թիւն լոյս տեսած իր երգարանը այդպէս է կոչել. զիտեցիր սիրել, բայց զիտեցիր և կուել: Մ' այս դէմ են կուել ցարոզում երգ գերը. Հին միապետական բռնակալ կարգերի. նա յեղափոխական գործիչ էր, միաժամանակ և Հնչակեան կուսակցութեան եռանդուն անդամը: Նա սէր է բարոզել միութեան, եղայրութեան՝ «Արքից, եղայրը, միանանց, բաւական է մեր տանձարբ» և այլն:

Տաղեանն ունի նաև մի շարք պարեղանակներ:

Տաղեարշ

5. «Խորինրդային Հայաստան», 1927 թ.

Ժողովրդական երգիշ-աշուղ Գրիգոր Տաղեան. — . . . Ալբրէջանի Լուսաժողովմատի կազմակերպուած Բագդի աշուղական համագումարին Հայաստանի Լուսաժողովմատի կողմից Ներկայացուցիչ էր ուղարկւած ժողովրդական երգիշ-աշուղ Գրիգոր Տաղեանը:

Գրիգոր Տաղեանը . . . շատ վազ է սկսել պարապել իր սիրած արևեստով-երաժշշութեամբ: Արդէն 17 տարեկան հասակից նա սկսում է զրել ժողովրդական ոգով ոտանաւորներ, որոնց վրայ զնում է նոյն ոգով յօրինած սեփական եղանակներ և շնորհիւ իր դուրեկան ձայնի, երգում և տարածում է ժողովրդի մէջ իր հեղինակութիւնները, նաև զարգելով թառի վրայ: Ալայիսով: Գ. Տաղեանը (Շերամը) յիշուն տարի շարունակ, եռանդով նւիրած իր գործին, երգում է ժողովրդի հոմար իր հիւսած երգերը, որոնցից շատերն արդէն մասսայականած են և ծառայում են ինչպէս նիւթ մեր մեծ երաժշտագէտների համար: Հայաստանի Լուսաժողովմատը նըկատի առնելով Գրիգոր Տաղեանի այս երակարամեայ հասարակական-երաժշտական գործունէութիւնը՝ գործուղեց նրան Բագդի, մասնակցելու վերայիշեալ համագումարին: Թիէպէտ համագումարը, մի շարք տեխնիկական անյարմարութիւնների պատճառով, չկայացաւ, բայց համագումարի

կօմիսիայի և ժիրքի ներկայացուցիչները, լսելով Գ. Տալեանի սեփական երգերի կատարումը, մեծ հիացմանցով արտայայտեցին նրա հեղինակութիւնների 4 կատարման մասին: Գ. Տալեանի հեղինակութիւնները կրում են ժողովրդական և միրիական բնոյթ:

6. «Պրոլետար», 1929, Ապրիլ 6.

Անդրկովկասեան ժողովրդական երգերի երկնե. — Ապրիլի 3-ին, պետական ակադեմիկ օպէրային թատրոնում կայացաւ անդրկովկասեան ժողովրդական երգերի երեկոն, մասնակցութեամբ հայ, թուրք և վրացական տժերի: Այդ երեկոյի համար յատկապէս հրահրուած էին Գուրիայից և Կախիէլիայից ժողովրդական երգեցիկ խոսքեր:

...Երկրորդ բաժնում զորս եկան յայտնի աշուու Գրիգոր Տալեանը (աշուու Շերամը) և ժողովրդական երգերի կատարող Վ. Տէր-Առաքելեանը:

Աշուու Շերամի երգերը պատկանում են աշուուական երգերի կուպլեային ձեւին: Նա երգեց իր սեփական առեղծագրոծութիւններից մի քանի կտոր, թափ նազակութեամբ, որոնք հասարակութեան կողմից ընդունւեցին ջերմօրէն:

Պ. Հ.

Ահա աշուուական այսպիսի բեղմաւար, կուլտուրական զործունէութիւն է ցոյց տեղ աշուու Շերամը, որ ընդդրկում է ամրող կէս դարի պատմութիւն:

70-ական թւականների վերջին ցառորդին նա հանձէս զալով՝ կարողացաւ, աշուու Սայհեթ-Նովայից, Շիրինից, և աշուու Զիւանոս յետոյ, նոր նաճումներ անել աշուուական արւեստի ասպարիզում:

Աշուուական այն նոր, ինքնուրոյն եղանակները, որ նա յօրինել է, ժողովրդական զողարքի այն երգերը, որ հիւսել է, ինքնին զեղարւեստական - կուլտուրական նաճումներ են: Եւ, անկասկած, նրա արեւելեան հարազատ եղանակներն ու ժողովրդական երգերը ուրոյն տեղ են րոնկլու

հայ աշուուական զեղարւեստական զրականութեան և աշուուական երաժշտութեան պատմութեան մէջ:

Այսօր էլ Շերամը, կովկասահայ աշուուական արւեստի այդ լաւագոյն ներկայացուցիչը, չնայած իր ծերութեան, երիտասարդական աւինով զեռ ծառայում է աշուուական արւեստին, ժողովրդի մէջ վատ պահելով աշուուական երգն ու երաժշտութիւնը:

### 1. Ղուշ գնաց

Ղուշ գնաց, թառ գնաց,  
Սարէն-ձորէն ձէն կու տայ.  
Սիրս հետօն տարաւ գնաց,  
Անազ էլի տուն կու զայ:

Հազար ըսանկ փետուրներով -  
Ղանատները ալվալայ.  
Բացեց-փեց միծ ծովերով -  
Անցաւ զնաց, այ բալայ:

### 2. Կայնի մէկ սէյր անեմ

Սեւ սեւ աշերիդ զուրբան,  
Երկէն սաշերիդ զուրբան.  
Կայնի մէկ, եար, սէյր անեմ,  
Անուշ պաշերիդ զուրբան,  
Կայնի մէկ, եար, սէյր անեմ:

Կոկել ես կերթաս սէյրան,  
Համ թառլահ ես, համ չէյրան.  
Կայնի մէկ, եար, սէյր անեմ,  
Մնացի շակիդ հէյրան,  
Կայնի մէկ, եար, սէյր անեմ:

Բաղը լիքն է վայդերով,  
Սիրս լիքն է դարտերով,  
Կայնի մէկ, եար, սէյր, անեմ<sup>1</sup>

### 3. Եարս դուն ես

Ազիզ, անուշ եարս դուն ես,  
Ես քնար եմ, լարս դուն ես.  
Հագուս ընկեր իարս դուն ես,  
Ես հիւսել եմ, ճարս դուն ես:

1. Այս նաճումներն ունի նաև երկու տաճ ես, թոյլ մնելու պատճենով՝ աշուու առաջարկեց լուսել:

Սիրուն փէրի եարս գուն ես,  
Ես մատնի եմ, քարս գուն ես.  
Աչքիս լոյսը եարս գուն ես,  
Ես վարդ եմ, խառս գուն ես:

Դարդիս դարման եարս գուն ես,  
Ես շիշ եմ, նէկտարս գուն ես,  
Ազիզ, ինչըս-խապարս գուն ես:

#### 4. Ինչ կանեմ

Գեղանից սավայի  
Եարը ինչ կանեմ.  
Մատիս եաղութ  
Ալմաստը ինչ կանեմ:

Գանի որ քեզ նման  
Խառ գոհար ունեմ,  
Կեղծ սոկով զարդարած  
Շարը ինչ կանեմ:

#### 5. Փայլուն աստղիկ

Եար, քեզ նման փայլուն աստղիկ,  
Դեռ ոչ մի մայր չի ծնել.  
Ճան, քեզ նման մի խաս ծաղիկ  
Դեռ մի աշխարհ չի ծել:

Ինցքան որ մնե գարտ ունենամ,  
Սրախ անհուն խորքերում,  
Մէկ քեզ տեսնիմ կը մոռանամ,  
Վարդ կը բացի իմ սրտում:

Ինչպէս ծաղկանց, ծարաւ ծաղկանց,  
Անձրեւ, ցողէ ամպերով,  
Դու էլ ցօլն ես միշտ իմ կենաց,  
Երթունքներով, այսերով:

#### 6. Սիրուն աղջիկ

Սիրուն աղջիկ մւր կերթաս,  
Գէյրէդ հագել ես կերպաս.  
Զի՞ լինի, որ մէկ անզամ  
Լայեկ անես մօտ զաս:  
  
Ամէն գիշեր քեզ համար  
Զունիմ հանգիստ գուն, դակար.  
Ինչու մէկ դէս չես նայում,  
Սրտէս լունիս էէլ ինքար:

Սիր աշխարը սարուտ է,  
Դաշտեր, ձորեր քարսուտ է.  
Անուշ աղջիկ, շէկ աղջիկ,  
Սիրսս թեզի կարօտ է:

Թեւեր չունեմ, որ թռնեմ,  
Հասնիմ փէշիդ՝ պինդ բռնեմ.  
Թէ որ ինձէն հնուանաս,  
Ընկնեմ քարէն ու մեռնեմ:

Շէկիկ աղջիկ սիրավոր,  
Ոսէկ մազեր բիւրաւոր.  
Ես քեզ այդքան սիրեցի,  
Դու ինձ թողիր վիրաւոր:

Արեւիդ մատաղ, սիրուն ջան,  
Բարեւիդ մատաղ, սիրուն ջան.  
Տերեւիդ մատաղ, սիրուն ջան,  
Հազիկ ես ալւան, թանկազին,  
Գեղեցիկ մարալ ես, անզին...  
Այրում ես, խորպում ամենքին:

#### 7. Մի՞ վշտանաւ

Իզուր տեղը մի՞ վշտանա,  
Անողջ սրտիդ վէքք մի՞ բանա,  
Սյոօր տրտում, վաղը ուրախ,  
Ամէն սկիսաց վերջ կունէնաւ:

Վ ինձկիդ հետ միշտ հաշտ կեցիր,  
Անձտ ցաւի մէջ մի ցցիր,  
Որքան կրնաս եղիր բարի,  
Թոյլ ընկերիդ միշտ կարեցիր:

Որքան վազես, որքան ջանաս,  
Ամբողջ երկրին էլ տէր դառնաս,  
Թէկուզ ոսկէ ծովուզ լողաս,  
Մերկ եկել ես, մերկ պիտ զնաս,  
Լաւ է Շերամ խելով զատես,  
Չարիդ, բարուդ լուրջ նկատես:

Այս անտիպ երգերը սիրով արամա-  
դրեց մեզ աշուղը, որոնց յանձնում ենց  
բանասիրական – աշուղական պատմու-  
թեանը:

26 Յունիսի 1980 թ.

Ա. ԵՐԵՄԵԱՆ

ԹԻԳԼԻՍ